

# Երեխան և փողը . ինչպես ձևավորել ճիշտ վերաբերմունք փողի հանդեպ



Փողն ամենատարածված ու հակասական քննարկումներ ունեցող թեման է: Ոմանք այն չարիք ու բոլոր խնդիրների աղբյուր են համարում, մյուսները՝ հարստություն: Երեխայի

մոտ փողի հանդեպ ճիշտ վերաբերմունք ձևավորելուց առաջ նախևառաջ անհրաժեշտ է ինքներս հստակ հասկանալ, թե ի՞նչ է փողը մեր համար: Ընդ որում, անհրաժեշտ է գտնել այնպիսի հավասարակշռություն, որտեղ փողը ոչ չարիք է և ոչ էլ կատարելության չափանիշ: Չէ որ իրականում, նրանք ոչ մի վատ բան չեն բերում և բոլոր խնդիրները մեր մեջ պետք է փնտրենք:

## Երեխաների վերաբերմունքը փողի հանդեպ

Երեխայի ֆինանսական դաստիարակության մասին չի կարելի խոսել այն դեպքում, երբ տանն անընդհատ վիճաբանություններ են ծնողների միջև ընտանեկան բյուջեի պատճառով: Անընդհատ լսելով փոխադարձ վիրավորանքներ ու վեճերին ակնատես դառնալով՝ երեխան կմեծանա ազաի ու մանրախնդիր կամ չի կարողանա համակերպվել կյանքի ժամանակակից թոհուբոհին:

## Ընտանեկան բյուջե կազմելը

Երեխաների մոտ փողի հանդեպ ճիշտ վերաբերմունք ձևավորելը կարելի է

սկսել 5-7 տարեկանից: Հենց այդ տարիքում է, որ երեխան հետաքրքրասիրորեն է սկսում ցուցաբերել թվերի նկատմամբ, նկարած փող օգտագործում խաղերի մեջ:



Ֆինանսական խնդիրներին երեխային ծանոթացնելու առաջին քայլը կարող է լինել նրան ընտանեկան բյուջեի

կազմման մեջ ներքաշելը: Հաջորդ շաբաթվա ծախսերի ճիշտ հաշվարկը, գումարի տևտեսման միջոցներ գտնելը կայուն հիմք կդառնան երեխայի ապագա ինքնուրույն կյանքի համար:

Երեխային բացատրեք, որ ծախսերը պետք է բաժանել խմբերի՝ հիմնական ծախսեր (բնակվարձ, սննդի գումար, հագուստ, մանկական խմբակներ և այլն), ցանկալի (զբոսանք ու այցելություններ սրճարաններ, թատրոններ, կարուսել և այլն), կուտակային (գումար ենք հավաքում հանգստի գնալու կամ մեքենա գնելու համար) և ոչ պարտադիր (խաղալիքներ, քաղցրեղեն):

Գիտենալով, թե ինչքան գումար է ծախսվում, երեխան արդեն կսովորի նախահաշվարկ անել և պլանավորել: Երեխայի հետ միասին որոշակի նպատակ մտածեք և սկսեք դրա համար գումար հավաքելու միջոցներ գտնել: Մի մոռացեք նպատակակետին հասնելու համար մրցանակ սահմանել:

Երեխային նման եղանակով ծախսերի հետ ծանոթացնելը փոքրիկի համար շատ բաներ սովորելու առիթ կդառնա:

## Կատարում ենք խնայողություններ

6-7 տարեկան երեխաներին առաջարկեք գումար «հետ գցել»: Դա ոչ միայն փողի հանդեպ ճիշտ վերաբերմունք դաստիարակելու ևս մի քայլ կլինի, այլ նաև երեխային կմղի ինքնուրույնության:

Միակ նրբությունն այս դեպքում խնայողության նպատակի ճիշտ ընտրությունն է, այլապես այն շատ շուտ կձանձրացնի երեխային: Նման նպատակ կարող է լինել շատ ցանկալի խաղալիքի համար գումար հավաքելը:

## Գրպանի ծախսեր



Երեխային առաջին առօրյա ծախսերի գումարը պետք է հատկացնել արդեն 6-7 տարեկան հասակում (չնայած, դա ծնողի ընտրության խնդիրն է):

Բացատրեք երեխային, թե ինչի համար է հատկացվում այդ գումարը և նրան ընտրության հնարավորությունն տվեք: Թող նա ինքը որոշի ինչ գնել այդ գումարով` պաղպաղակ թե կոնֆետ:

Կարող եք նրան հուշել, այդ գումարը խնայել հետագայում նոր խաղալիք գնելու համար:

Գրպանի գումարը երեխային պետք է տալ շաբաթը մեկ անգամ, կոնկրետ օր: Ընդ որում, գումարը պետք է հստակ լինի: Այն կարող է աճել տարիքի հետ միասին, բայց ոչ ծախսերի աճին զուգընթաց:

## Ի՞նչ էի կարելի անել

Որոշ ծնողներ երեխային կատարած աշխատանքի կամ լավ առաջադիմության համար «վարձատրում» են: Իհարկե, հետաքրքիր գաղափար է: Սակայն, չպետք է մոռանալ, որ երեխայի մոտ պետք է հետաքրքրությունն առաջանա հենց ուսման, այլ ոչ թե գումար վաստակելու հնարավորության համար: